

+

ԱՐԴԱՐ ՅՈՎՀԵՆՆԻՍԵՆ

Արգար Յովհաննիսեանն այն հազուագիւտ հայ
գործիչներից էր, որոնց կորուստը ընդհանուրի կորուստն
է: Իբրև անհատ նա այնպիսիներից էր, որի մահը զգա-
լի կը լինէր հայ հասարակութիւնից անհամեմատ
բազմաթիւ և անհամեմատ բարձր կուլտուրական հա-
սարակութեան համար:

Ներկայ տողերը՝ գրւում են շտապ, կորստի թարմ
տպաւորութեան տակ: Այսօր մենք չենք խոստանում
մեր ընթերցողին տալ տաղանդաւոր խմբագրի, փալլուն
հռետորի և բազմակողմանի հասարակական գործչի
լիակատար կենդանագիրը: Մտադիր չենք մանաւանդ
քննադատութեան բովով անցկացնել նրա գործունէու-
թիւնը: Եթի դեռ հանգուցեալի մերձաւորների արցունք-
ները չեն դադարել, եթի դեռ նրա գերեզմանի վրայ
հանգչող պսակների տերենները չեն թառամել, կարելի
է միթէ սառն հոգով և անկողմնապահ քննադատել
հայ գործչի երեսուն տարուալ ընթացքում արածնե-
րը: Ժամանակին մենք ևս հանգուցեալի դրական կող-
մերի հետ մատնացոլց կանենք եւ բացասական կողմե-
րը: Բայց ալսօր դեռ վաղաժամ է: Հայ հասարակու-
թիւնը դեռ ծանօթ չէ իւր շնորհալի զաւակի բազմա-
կողմանի գործունէութեան հետ:

Այդ գործունէութեան ընդհանուր և անպահով
պատկերն է, որ ուզում ենք այս յօդուածովներկայաց-
նել «Լումար»-ի ընթերցողներին: Մենք կը թուենք
Արգար Յովհաննիսեանի արածները և այս հասարակ

ցուցակագիրն անգամ, կարծում ենք, բաւական կը լինի նոյն իսկ նրա թշնամիներին համոզելու, թէ որպիսի խոշոր գործչից զրկուեց հայ հասարակութիւնը: Թող ներկայ համառօտ կենսագրութիւնը ապագայ քննադատին ծառալի իբրև հում նիւթ նրա անկողմնապահ ուսումնասիրութեան համար: Աւելին ասելու լաւակնութիւնը առ ալժմ չունինք:

Արգար Յովհաննիսեանը, որ վախճանուեց ներկայ տարուայ Ապրիլի 15-ին Բաթումում և թաղուեց Թիֆլիսում նոյն ամսի 20-ին, ձնուել է 1849 թուականի Մայիսի 14-ին: Ասել է, նա մեռաւ իւր հասակի այն ժամանակամիջոցում, երբ տղամարդի խելքի կորովը գեռ ընկճուած չի լինում և նրա քնաւորութիւնը լիովին կազմակերպուած է կեանքի երկարատև փորձառութիւնից:

Արգար Յովհաննիսեանը ծնուել է Թիֆլիսում, բայց նրա ցեղը ծագումն է առել Հին-Զուղարում: Հանգուցեալի հայրը իւր ժամանակին Թիֆլիսի նշանաւոր քաղաքացիներից մէկն էր, բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանը: Մի շատ լուսամիտ և վերին աստիճանի զարգացած անձնաւորութիւն, որ Թիֆլիսում շատ ազգեցիկ անհատ էր: Ինքն ըստ ինքեան բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի կեանքը ներկայացնում է բաւական հետաքրքական պատկեր, որ բնորոշում է հայի բնական ձիրքերն, աշխատասիրութիւնը և անհատական եռանդը՝ իւր համար կեանքի ասպարիզում ճանապարհ հարթելում:

Հին-Զուղարի մի նոհապետական, ոչ հարուստ և ոչ իւր ծագումով յայտնի ընտանիքի զաւակ Յարութիւնը ուժ տարեկան հասակում իւր եղիոր Յակովի ձեռքով բերւում է Հին-Նախիջևան: Այդ Յակովը ծառառում էր Եկրմազանեան եղբայրների առևտրական գործերում և յաճախ գնուըր էր Ռուսաստան: Ըմբռնելով իւր

կըտսեր եղբօր բնական ընդունակութիւնները, Յակովբը նրան իւր հետ տանում է Մոսկուա և յանձնում Լազարեան ճեմարանին։ Ալստեղ Յարութիւնին չեն ընդունում տեղ չը լինելու պատճառով։ Յակովբը երեխալին թողնում է Մոսկուայում և ինքը գալիս է Կովկաս։ Յարութիւնի մասին տեղեկութիւն են տալիս Լազարեանին, և սա հրամայում է ուսումնածարտւ մանկանը ընդունել ճեմարան։

Աւարտելով գիմնազիական կուրսը, Յարութիւնը փափագում է շարունակել ուսումը։ Բայց այդ ժամանակ Լազարեան ճեմարանից համալսարան մտնելու համար հարկաւոր էին առանձին պատրաստութիւն, քընութիւն և, վերջապէս, կապեր։ Օգնութեան է հասնում ճեմարանի ուսուցչէ Դերմանացի Նլէլխերը, որ շատ սիրում էր Յարութիւնին։ Լինելով անորդի, գերմանացին որդեգրում է Յարութիւնին, պարագում է հետը և տալիս համալսարան։ Ամբողջ ուսանողութեան ժամանակ Յարութիւնը մնում է Նլէլխերի բարի ազգեցութեան տակ և նրա շնորհավ է, որ հանգուցեալն այնպէս ազատ տիրում էր գերմաներէն լեզուին։ Ապագայում Նլէլխերը ընկնում է չքաւորութեան մէջ և Յարութիւնը նրան օգնում է մինչեւ մահ։

1843 թուին Յարութիւնը բժշկի վկալականով տեղափոխուում է Թիֆլիս և անմիջապէս նշանակում է քաղաքային հիւանդանոցի բժշկկ (մլածայի օրդինատօր) և նոյն թուականին ամուսնանում է Եղիսաբէթ Ղուբալեանի հետ։ 1857 թուին Յարութիւն Յովհաննիսեանը Պետերբուրգի բժշկական Ակադեմիայում տալիս է յաջողութեամբ բժշկապետի քննութիւն և վերադառնում է Թիֆլիս։ Այս անգամ նա իւր գործունէութիւնը նուիրում է պետական պաշտօններին։ Նա նշանակում է Կովկասի բժշկական վարչութեան գլխաւորի պաշտօնագոտար, միևնույն ժամանակ, Կովկասի փոխարքական Մեծ

իշխան Միխալիկ Նիկոլաեվիչն ընդունում է նրան իր՝ մօտ անձնական բժշկի պաշտօնով։ Մօտ տասնումէկ տարի ծառայելով արդ պաշտօններում, նա ծառայութիւնը թողնում է և սկսում է պարապել մասնաւոր բժշկութեամբ։ 1886 թուին Յարութիւն Յովհաննիսեանը վախճանւում է և թաղւում Վերալի գերեզմանատանը։

Հանգուցեալ բժշկապետը, չը նալելով իր պատասխանատու պաշտօններին, իրան հեռու չէր պահում հասարակական գործունէութիւնից։ Նա երկար ժամանակ եղել է Ներսիսեան դպրանոցի հոգաբարձու, բժժիկ, երեցգոյխան Մողնու եկեղեցու։ Նրա դռները բաց էին հասարակական գործիչների համար, որոնց օգնում իւր խորհուրդներով և կապերով։ Նրա ամուսնու Եղիսաբէդի աջակցութեամբ և նախագահութեամբ հիմնուում է Գալիանեան ուսումնարանը։ Այդ կինը, որ յալտնի էր Թիֆլիսին իր բնական ընդունակութիւններով և աշխոյժ բնաւորութեամբ, մեծ ազդեցութիւն է ունեցել Արքարի վրայ, որ յաճախ խոստովանում էր թէ իւր ազգային ուղղութիւնը պարտական է մօր ազդեցութեանը։

Բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանը ազատ տիրում էր գրեթէ բոլոր եւրոպական լեզուներին։ Նին լեզուները—յունարէն և լատիներէն նա գիտէր հիմնաւորապէս և ունի գրած մի ամբողջ դասախոսութիւն լատին լեզուով։ Իւր ուղղութեամբ և ձգտումներով հանգուցեալը ևրոպացի էր։ Ֆիր և վառվուն մարդ էր, որ իր խրոխտութեամբ և համարձակութեամբ գիտէր երկիւղ ներշնչել թշնամիներին և յարգանք բարեկամներին։

Յալտնի բան է, որ մի ալդպիսի անձնաւորութիւն չէր կարող իր միակ արու զաւակին չը տալ ընտիր կրթութիւն, մանաւանդ որ նիւթական միջոցների պա-

կասութեան մասին խօսք անդամ չէր կարող լինել:

Յանձնելով Աբգարին կարճ ժամանակով Գաբրիէլ Խատիսեանի պանսիօնը, շուտով նրան տեղափոխում են Պետերբուրգ: Այստեղ տասնումէկ տարեկան հասակում, այն է 1860 թուականին, Աբգարը իր մերձաւոր ազգական Մկրտիչ Սանասարեանի խնամքով մտնում է պ. Կարապետ Եղեանի պանսիօնը: Մանուկը շուտով արտայալում է իր բնական ընդունակութիւնները, իւր աշխոյժ բնաւորութիւնը, վարվուն հոգին և գրաւում է թէ իւր ընկերների, թէ դասատուների և թէ մանաւանդ պ. Եղեանի համակրութիւնը և դառնում է առաջին աշակերտը պանսիօնում: Զորս տարուց լետոյ պանսիօնը փակում է: Աբգարը տեղափոխում է մալրաքաղաքի Վլ-դ գիմնազիան: Այստեղ նա մնում է ընդամենը երկու տարի: Նշանաւոր բժիշկ Բօտկինը խորհուրդ է տալիս նրան հեռանալ հիւսիսից, որովհետեւ նրա մէջ թոքախտի նշաններ է գտնում: 1866 թուի ամառը Աբգարը վերադառնում է Թիֆլիս նիհարած ու դեղնած: Բայց և այնպէս նա կամենում է շարունակել ուսումը և մտնում է աւաշին գիմնազիայի եօթներորդ դասարանը: Մի տարուց յետոյ աւարտելով ուսումը, նա ուղևորում է Պետերբուրգ, հակառակ բժիշկների խորհրդին և մտնում համարսարանի իրաւաբանական ֆակուլտետը:

Սակայն այստեղ նա ուսանում է ընդամենը մի տարի: Նրա հոգին ձգտում է դէպի տւելի լուսաւոր երկրներ: Նա գնում է Գերմանիա և սկսում է Լալացիգիում լսել նշանաւոր պրօֆեսսորների դասախօսութիւնները ֆիլիսոփայական գիտութիւնների մասին մինչև 1872 թուականը: Այնուհետեւ նա վերադառնում է Թիֆլիս: Բայց նախ քան որևէ պաշտօնի ձեռնարկելը, գնում է Պետերբուրգ և ուսումնասիրում գործնական ֆինանսագիտութիւն, որին իսկ հաշուա-

պահութիւն։ Ապա վերադառնում է Թիֆլիս և անմիջապէս ընտրում է տեղական առևտրական բանկի գլուխկոոր 24 տարեկան հասակում։

Այդ ժամանակից ահա սկսում է Աբգար Յովհաննիսեանի գործունէութիւնը։

Երիտասարդը, կենսախինդ, օժտուած բնական բազմակողմանի ձիրքերով, նախանձելի արտաքինով, սրախօս և սրամիտ, զուարճախօս և ուրախ սեղանակից, բարի և առատաձեռն ընկեր, նա միանդամից գրաւում է ընկերական շրջանների ուշադրութիւնը և գառնում Կովկասի մայրաքաղաքի բոլոր շրջանների և ազգութիւնների համար ցանկալի հիւր, Կեանքն ուրախ ժպտում է երջանիկ յատկութիւնների տէր երիտասարդին և լոյն բաց է անում իւր դռները նրա առջև։ Մտաւոր հարուստ պաշարի հետ Եւրոպալից բերած և գլխաւորապէս իւր հոգուց բղխած արտաքին արժանաւորութիւնները քաղաքավարութիւնը, սիրալիր վարմունքը, ուրիշների կարծիքները ուշադիր լսելու պատրաստակամութիւնը և համբերողամտութիւնը գրաւում են ընդհանուր համակրութիւն։

Մենք շեշտում ենք Աբգար Յովհաննիսեանի ալսարտաքին յատկութիւնները ոչ առանց պատճառի։ Հայ գործիչները, լինեն նրանք խմբագիրներ, հրապարակախօսներ, ուսուցիչներ թէ ինչ, ընդհանուր առմամբ մի յատկութիւն ունեն, որ յամենայն դէպս չեն կարող համակրելի համարուել։ Նրանք անուշադիր են դէպի ընկերական կենցաղավարութեան տարրական վալելչութեան կանոնները։ Իբրև ընկերական շրջանների անդամներ նրանք ձանձրալի են և անտանելի։ Նրանք չը գիտեն իրանց պահել հասարակութեան մէջ։ Բաւսկան է, որ մի քայլ հեռանան իրանց նեղ բնից և արդէն անզօր են ինչպէս թևերը կտրուած թռչուններ։ Զենք ասում օտարազգիների մէջ, որոնցից այնքան հեռու

են պահում իրանց, ալլ նոյն իսկ իրանց հալրենակից-ների շրջանում չը գիտեն պահպանել հասարակ մարդավարութեան կանոնները, եթէ ալդ շրջանը նրանց սովորական բարեկամներից չի բաղկացած։ Անհամքեբողամիտ, միակողմանի, զուրկ կանոնաւոր խօսելու և վիճաբանելու ընդունակութիւնից, երբեմն անտեղի կոպիտ, երբեմն մանէկենի պէս լուռ՝ նրանք ողորմելի տպաւորութիւն են անում կողմնակի դիտողի վրայ։ Ով գիտէ քաղաքավարի վարուել, վալելուչ հագնուել, մեղմ խօսել—նրանց աշքում «բուրժուաէ», մի բառ, որի իսկական նշանակութիւնը նրանք սխալ են ըմբռում, քաղաքավարութիւնը շփոթելով բուրժուականութեան հետ։

Այս դէպքում, հարկաւ, մեծ դեր է կատարում ընտանեկան կրթութեան պակասութիւնը։ Մեր գործիչները շատ քիչ բացառութեամբ ժողովրդի տգէտ խաւերից դուրս եկած մարդիկ են, Լաւագոյն դէպքում նրանք կարողանում են զարգացնել իրանց միտքը, իսկ կրթել իրանց բնաւորութիւնը աւելորդ համարում իրանց համար։ Ահա ինչու շատ անգամ մի քիչ մտաւոր պաշարի և տարրական զարգացման հետ հանդիպում ես անսահման գոռողութեան և անբարտաւանութեան։ Եւ այս ցաւալի թերութիւնը բնականաբար ներգործում է մարդկանց ամբողջ գործունէութեան վրայ։ Այս է պատճառը, որ աշակերտը հայ ուսուցչի բերանից լսում է հազար տեսակի անվալել դարձուածները, ընթերցողը հայ հրապարակախօսի գրուածների մէջ հանդիպում է ամենակոպիտ փողոցալին լիշոցների։ Այս է պատճառը, որ հայ մամուլի բանակոիւը հայ հոլանք է, հայ քննադատի քննադատութիւնը վիրաւը բանք, հայ ժողովների վիճաբանութիւնները անձնական երկպառակութիւն։

Բնաւորութեան կրթութիւնը ահագին ազդեցու-

թիւն ունի մտքի արտադրութիւնների վրայ: Ով ինքն իրան չը գիտէ կրթել, չի կարող ուշիշներին կրթել. ով չը գիտէ իր կրքերը զսպել, չունի իրաւունք ուրեշների կրքերի մասին խօսելու, ով չը գիտէ իրան մարդավարի և վայելուչ պահել, չունի իրաւունք հասարակութեան մէջ դուրս գալու: Կան որոշ օրէնքներ, որոնց արհամարհելը համարւում է տգիտութիւն: Միայն հանճարներին է ներելի խախտել ընդունուած պատշաճաւորութիւնը: Բայց հանճարներն իսկ այնքան սովորական կարգ ու կանոնների դեմ չեն մեղանչում, որչափ մեր հասարակական գաճաճները: Ահա ինչու նըրանք սիրելի չեն իրանց սովորական պարապմունքից դուրս, ահա ինչու նրանք ծիծաղ են լարուցանում իրանց համար քիչ թէ շատ անսովոր շրջաններում:

Աբգար Յովհաննիսեանն իւր հոգու ամբողջ կազմով իսկական հալ էր և հալ էլ մնաց մինչև մահ: Իւր ցեղի արժանաւորութիւնների հետ ունէր և, նրա թերութիւնները: Նա նոյնպէս հասարակ գերդաստանից էր և չէր կարող պարծենալ իւր նախնիքների տիտղոսներով: Բայց իւր կամքի ուժով և բնական ճաշակի նրբութեամբ կարողացել էր կրթել իւր բնաւորութիւնը, հեռացնել իւր հոգուց ասիսկան կոպտութիւնը և դառնալ հասարակութեան հաճելի անդամ:

Նա այն սակաւաթիւ հալ գործիչներից էր, որոնք գիտեն, ինչպէս ասում է Ժողովուրդը, «սևերես» չը մընալ օտարների առաջ: Ոչ ոք չը գիտէր գէպքը պահանջելիս հալ անուան վարկն այնպէս վալլուն ներկայացնել օտարների շրջանում, որպէս նա: Նա ընդունակ էր քչից անգամ օգտուել զարմանալի վարպետութեամբ:

Նրա բնաւորութիւնը լուրջ էր բայց ուրախ: Նրա վեճաբանութեան ձեզ նուրբ էր, բայց ազդու և երբեմըն թունաւոր: Նա այն անձանցից չէր, որոնք մի տարրական միտք լալտնելու. համար խորիմաստ փելի-

սովորի քղամիդ են հագնում և մի հասարակ գաղափար արծարծելիս բառի բուն իմաստով տանջւում են։ Ընդհակառակը, նա ընդունակ էր շատ անգամ ամենալուրջ միտքն ամփոփել մի և որևէ կատակի կամ հեզնական դարձուածի մէջ։ Նա խօսքի վարպետ էր և ունէր երոպական հոետորի բոլոր արժանաւորութիւնները։ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը, որ կարող է պարծենալ շատախօս իրաւասուներով, իւր աւելի քան երեսնամեալ գոյութեան ընթացքում հազիւ թէ ունեցած է Արգար Յովհաննիսեանի պէս պերճախօս իրաւասու։ Նրա սրամիտ դարձուածները բերանից բերան էին անցնում և դառնում ընդհանուրի սեպհականութիւն, ինչպէս յաջող ստեղծագործուած մի բանաստեղծութիւն։ Եւ շատ անգամ նրա մի յանկարծակի արտաստանած խօսքի մէջ լինում էր աւելի իմաստ, քան մի ուրիշ հոետորի երկար ճառի կամ մի որևէ ժուրնալիստի անվերջ յօդուածում։ Այս էր պատճառը, որ նա ամենուրեք ընկերական շրջանի հոգին էր և կենդանութիւնը։ Եւ իւր ներկայութեամբ նսեմացնում էր, հակառակ իւր կամքի, իրանից շնորհալիներին անգամ։

Արգար Յովհաննիսեանը կարինեթի աշխատաւոր չէր, որ միայն մի օրոշ գործով բաւականանար և իւր բոլոր ոլժերը նուերէր գիտնական կամ զուտ գրականական գործունէութեան։ Նա ծնուած էր հասարակական բազմակողմանի գործունէութեան համար։ Նա միշտ ձգտում էր դէպի կենդանի գործ։ Ահա ինչու լինելով խմբագիր, նա չը դարձաւ լոկ խմբագիր կամ հրապարակախօս, ունենալով գրականական ճաշակ, չը դարձաւ գեղարուեստական գրող։ Նա չը դարձաւ եւ սոսկ հալկական գործիչ, որովհետեւ հալ հասարակական կեանքի ասպարէզը նեղ էր նրա հարուստ ոլժերի համար։ Բայց իւր բոլոր գործողութիւնների մէջ մնաց

հաւատարիմ մի որոշ սկզբունքի. «լինել օգտակար նախ և առաջ իմ ազգին» ահա նրա հաւատամքը, որ և գործադրեց որքան կարող էր:

Արդէն իւր գործունէութեան սկզբում, այն է 1873 թուականին ջերմ փափագը իւր ազգին ծառալելու, արտայալտում է գրականական ասպարիզում: Իւր հաշուով նա հրատարակում է ալդ թուականին մի շարք գուտ գրականական և մանկավարժական երկեր, ի միջի ալլոց եւ Րաֆֆիի լալտնի «Փունջը» երկու հատորով, Շիլերի Վիլհելմ Ֆէլլը Գ. Բարխուդարեանի թարգմանութեամբ և Ստ. Պալասանեանի «Քերականութիւնը մալրենի լեզուի»:

Բայց սոսկ հրատարակչի գործը, հարկաւ, չէր կարող գոհացնել Յովհաննիսեանի նման մի տաղանդաւոր մարդու: Եւ ահա 1876 թուականի լուլսի մէկից նա ձեռնարկում է մի գործ, որ շատերին այն ժամանակ յանդգնութիւն էր թւում: Նա սկսում է հրատարակել «Հիւսիսափալլից» լետոյ առաջին գրականական հանդեսը «Փորձը» աւելի և րոպական ուղղութեամբ: «Փորձը» նախ լոյս էր տեսնում երեք ամիսը մի անգամ և ապա երկու տարի անցած դառնում է կատարեալ ամսագիր:

Արգար Յովհաննիսեանին շրջապատում են այն ժամանակուայ բոլոր խոշոր տաղանդաւոր գրականական ոլժերը գրեթէ առանց բացառութեան և «Փորձը» յաջողւում է կատարելապէս: Իբրև գլխաւորապէս գրականական հանդէս «Փորձը» շատ քիչ է զբաղւում առօրեայ հարցերով, բայց սրա փոխարէն տալիս է հայ գրականութեանը մի շարք խոշոր գրականական թէինքնուրոյն և թէ թարգմանական գործեր: Ալնտեղ են տպագրում Պոօշեանցի, Ծերենցի և Պարոնեանի երկերը և Շէքսպիրի ու Շիլերի մի քանի գործերը Գ. Բարխուդարեանի թարգմանութեամբ, Ստ. Պալասանեանի (Գրիչ) քննադատական լուրջ յօդուածները:

«Փորձ»ի հրատարակութիւնից մի տարի առաջ Աբգարը ամսուսնացած է լինում օր. Դարիա Քեթխուղեանի հետ, որ հարուստ օժիտի հետ քերում է և իւր ընտիր ընտանեկան կրթութիւնը և հայ կնոջ լաւագոյն յատկութիւնները։ Երիտասարդ զոյգը բաց է անում իւր հիւրասէր և հարուստ տան գոները հայ գրականական աշխատաւորների համար առանց հայեացքների և ուղղութիւնների խորութեան։ Դա առաջին և վերջին գրականական սալօնն է լինում հայերի մէջ, ուր մտքերը շփում են և ուր խօսակցութեան և հետաքրքրութեան առանցքը լինում է հայ գրականութեան բարգաւաճումը։

Ումանք իրանց միտքը կրթում և զգացումները նըրբացնում են այդ միակ հայկական սալօնում։ Հարկաւ, շրջանի կենդրունը և ոգին լինում է ինքը Աբգար Յովհաննիսեանը, որ իւր քաղաքագէտ վարուողութեան շնորհով կարողանում է տարբեր ուղղութիւնների տէր մարդկանց մէջ հաշտութիւն պահպանել և ստիպել նըրբանց ծառալելու մի ընդհանուր բարոյական շահի—հայ գրականութեան զարգացման գողափարին։

«Փորձ»-ը հայերի մէջ առաջին պարբերական հանդէսն էր, որ զգաց հայ գրողի աշխատանքը վարձատրելու պարտականութիւնը և իրագործեց։ «Փորձ»-ին աշխատակցողները վարձատրւում էին և այս է պատճառներից մէկը, որ նրա մէջ ամեն մի անցորդի խակ մտքի արտադրութիւններին տեղ չէր տրւում։

Դժբաղտաբար, կարճ ժամանակում ամբողջ հայութեանը սիրելի դարձած հարուստ ամսագիրը հրատարակուեց ընդամենը ճ տարի։ 1881 թուականին «Փորձ»-ը դադարեց։ Պատճառը ոչ այնքան բաժանորդների սակաւութիւնն էր—«Փորձ» դադարելիս ունէր մօտ 700 բաժանորդ—որքան ծախսերի շատութիւնը։ Սկսելով լայն ծառալով, Աբգար Յովհաննիսեանը իւր բնաւորու-

թեան շնորհով չի կարողանում ծախսերը կրճատել։
մինչդեռ կրած գէֆիցիտը արդէն զգալի է դառնում
նրա դրամական վիճակի համար։

«Փորձա»-ը դադարում է, բայց խմբագրի հոգին
անհանգիստ է։ Նա չի կարող ապրել առանց գրակա-
նական գործունէութեան։ Քաղաքային խորհրդարանի
եռանդուն իրաւասուն, ընդունակ ֆինանսական գործի-
չը, գրեթէ բոլոր հայ ընկերութիւնների անդամն ու
նախագահը, ներսիսեան դպրանոյի հոգաբարձուն, քա-
ղաքային մի քանի յանձնաժողովների անդամն ու նա-
խագահը, չը նայելով իւր բարդ գործունէութեան,
ձգտում է դէպի գրտկանութիւն։ Եւ ահա «Փորձա»-ի
դադարումից մի տարի անցած իրաւունք է ստանում
հրատարակելու «Արձագանք» շաբաթաթերթը։ Նորից
հայ գրականութեան ընտիր ոյժերը շրջապատում են
Աբգար Յովհաննիսեանին, նորից նրա հիւրընկալ դըու-
ները բացւում են նրանց առաջ։

«Փորձա»-ում Աբգար Յովհաննիսեանը կատարում էր
գրեթէ բացառապէս խմբագրողի դեր։ Քննում էր,
քննադատում էր և ուղղում ամսագրի մէջ տպուող
երկերը։ Իբրև գրականական ընտիր ճաշակի տէր նա
ցուցմունքներ էր անում հեղինակներին և շեշտում
նրանց երկերի գեղարուեստական թերութիւնները։ Նա
էսթեթիկ էր և գիտէր ըմբռնել իրան ներկայացրուած
վէպերի, բանաստեղծութիւնների մէջ գեղեցիկը և խորշել
գուեհիկից և կոսլիտից։ Այս գէպքում նա իւր ժա-
մանակակից հայ խմբագրիների մէջ մըցակից չունէր։

Իբրև հրապարակախօս Աբգար Յովհաննիսեանը
ասպարէզ է գալիս իսկապէս «Արձագանք»-ի սկզբնա-
ւորութիւնից սկսած։

«Արձագանք» ալն ժամանակուալ աշխատակիցները,
որ «Փորձի» աշխատակիցներն էին, շաբաթաթերթում
գրելու նախապատրաստութիւն չունէին։ Սովորած լի-

նելով երկար մտածողութեան, նրանց համար դժուար էր շուտափոլթ արծարծել օրուալ անցողիկ խնդիրներ և հասարակական հրատապ գէպքերը քննադատելի Միայն Ալէքսանդր Երիցեան էր, որ արագ գրելու և մի շաբաթաթերթի համար կարևոր աջակիցը լինելու ձիրքն ունէր։ Ուստի մի առ ժամանակ մինչև շաբաթաթերթի խմբագրութեան կազմի փոխուելը, մինչև նոր և թարմ ոլժերի երեան գալը Աբգար Յովհաննիսեանը ստիպուած էր շաբաթաթերթի հրապարակախօսական բաժնի ամբողջ ծանրութիւնն իւր վրալ ընդունել աշակցութեամբ Երիցեանի և Յարոյի։

Սակայն շուտով պարզուեց, որ խմբագիրն անհամեմատ աւելի սրամիտ ֆելիետոնիստ է, քան վարվուուն հրապարակախօս։ Աբգարև, հայ մամուլը մինչև ալդ ժամանակ չէր ունեցել և ալժմ էլ չունի Մախլա-սի պէս սրամիտ ֆելիետոնիստ։ Նա գրում էր ոչ կոպիտ ձեռվ, չէր յարձակում, ալլ քննադատում էր, չէր հայհոյում, ալլ խալթում էր։ Եւ նրա խալթոցները թունալի էր և կոկիծ տռաջացնող։ Հակառակորդը կատաղում էր ու փրփրում Մախլասին կարդալիս, միտողին պատասխանում էր հարիւր տողով, գոռում էր, հայհոյում, դարձեալ չէր հանգստանում, որովհետև ստացած հարուածը սուր էր լինում։ Մախլասը գրում էր Սվիվթի սառնասրտութեամբ և ալս էր, որ կատաղեցնում էր նրա հակառակորդներին և վերջի վերջոյ թուլացնում։

Նոյն թոյնը բղխում էր Աբգար Յովհաննիսեանի եւ հրապարակախօսական յօդուածներից։ Նա քիչ էր գրում, բայց գրում էր բաւական ազդու։ Նրա ոճը քաղաքավարի էր, մեղմ, բայց ոչ ճապաղ։ Նա քիչ էր յափշտակում, բայց երբ յափշտակում էր, գիտէր և յափքշտակել։ Խսկ երբ կատաղում էր, գիտէր արդէն կատաղել ինչպէս տղամարդ։ Բաւական է լիշել նրա «Հայոց ազգի կատա-

զի թշնամին» վերնագրով յօդուածների շարքը, որոնք ուղղուած էին հայ վաճառականների այն մեծամասնութեան դէմ, որ յանուն իւր գրպանի ամենուրեք ապականում է իւր ազգի անունը, կանդ չառնելով ոչ մի աններելի միջոցի առջև։ Լինելով ինքը վաճառականներից իսկ լնտրուած գիրեկտոր Թիֆլիսի փսխտդարձ վարկի ընկերութեան, նա յանդգնութիւն ունեցաւ ձեռնոց շպրտել իւր ընտրողների երեսին և կանչեց նրանց բարոյական դատի ծաշմարիտ է, այդ յօդուածների առաջին շարքը պատկանում էին «Արձագանքի» ալն ժամանակւալ երիտասարդ աշխատակիցներից մէկին, որ ոչինչ կապ չունէր վաճառականների հետ, բայց չէ որ «Արձագանքի» խըմբագիրը Յովհաննիսեանն էր և իւր կամքով էր տեղ տալիս իւր շաբաթաթերթում յարձակումներին. չէ որ յետոյ ինքը ասպարէզ եկաւ իւր ամբողջ ստորագրութեամբ։

Սկսուեց կատաղի ընդդիմադրութիւն։ Այն բոլոր անձինք, որոնք իրանց խիղճը մաքուր չէին զգում, որոնք իրաւ իրանց ազգի վերաբերմամբ բարոյական ապականիչներ էին, ոտքի կանգնեցին միահամուռ։ Կամեցան տապալել Արգար Յովհաննիսեանին։ Ապականիչներից մէկը շաբաթերէլ էր մի վերին աստիճանի անգրագէտ բրօշիւր, որ չը քամահրեց ուրիշների գրպանից նոր գուրս բերած ձեռով դիպչել համարձակ խմբագրի անձնական, նոյն իսկ ընտանեկան պատուին։

Բայց Արգար Յովհաննիսեանին յուսահատեցնելը հեշտ չէր։ Տեսնելով ազգային ցեցերի ամօթահար լինելը, նա թողեց հրապարակախօսական ձեւը և սկսեց ֆելիետօններով ծաղակոծել նրանց։ Կատաղութիւնն աւելի սաստկացաւ։ Վերջապէս, անզօր հակառակորդները տեսնելով, որ գըչով նրա դէմ ոչինչ չեն կարող անել, վճռեցին այլ կերպ իրանց ոխը հանել։ Դրա համար ընտրեցին ալն միակ միջոցը,՝ որին ընդունակ էին-

տալ նրան նիւթական հարուած։ Շուտով պիտի տեղի ունենալին Աբգարի ընտրութիւնները իբրև դիրեկտօրի։ Հակառակորդները խօսք մի արին նրան սևացնելու։ Բայց այս էլ չը լաջողուեց։ Աբգար Յովհաննիսեանի վարկը շատ մեծ էր Թիֆլիսում։ Նրա տապալելը հեշտ չէր։ Վերջապէս, հակառակորդները լաղթահարուած յետ քաշուեցին կոռուի ասպարիզից, վախենալով այն էլ կորցնել, ինչ որ ունէին։

«Արձագանքը» շարունակում էր պահպանել «Փորձի» սկզբունքը՝ գրականական աշխատաւորներին վարձատրելու և պահեց մինչև վերջը։ Երբ Ռաֆֆին հեռացաւ «Մշակ»ից և մի քանի տարի լուելուց յետոյ նորեց սկսեց գրել այս անգամ «Արձագանք»ում, Աբգար Յովհաննիսեանի նիւթական վիճակն արդէն քալքայուած էր։ Նա չունէր միջոց իւր ուզածի չափ վարձատրելու հեղինակաւոր վիպասանին, բայց և այնպէս նշանակեց աւելի տողափարձ, քան երբեք ստացել էր Ռաֆֆին։

Աբգար Յովհաննիսեանի վարկուն բնաւորութիւնը սիրում էր փոփոխութիւններ։ Նա «Արձագանք» շաբաթաթերթը դարձրեց պատկերազարդ և դարձեալ ահագին նիւթական վնաս ունեցաւ։ Ապա Թոլլտուութիւն ստացաւ օրաթերթ դարձնելու և 1891 թուականից սկսեց լոյս ընծալել շաբաթը երեք անգամ։

Բայց բաւական է «Արձագանքի» մասին։ Թողնենք խօսքը ուրիշներին և, դառնանք Աբգար Յովհաննիսեանին։

Իբրև հասարակական գործիչ Աբգար Յովհաննիսեանը ռուսահայերի մէջ չունէր նախորդը, չունի առավել և լաջորդը իւր անզուգական աշխուժութեամբ, եռանդով և վարած պաշտօնների քանակութեամբ ու բազմատեսակութեամբ։

Երեք անգամ նա ընտրուել է պատգամաւոր Վեհափառ Հայրապետների ընտրութիւններին, երկու ան-

գամ Թիֆլիսի թեմից, մի անգամ Բրուսալի և Եգիպտականի հայերի կողմից:

Նա երկու անգամ ներկալ է եղել Արևելագէտների համաշխարհալին ժողովներին Ստոկհոլմում և Միլանում:

Նա տասնուշեց տարի շարունակ վարել է ներսինեան հոգեսոր դպրանոցի հոգաբարձուի պաշտօն, միշտ գլխաւոր զեկավարողի դերը կատարելով։ Նա եղել է հոգաբարձու և խնամակալ Դալիանեան օրիորդաց դըպրոցի երկար տարիներ և մի տարի միայն Յովնանեան ուսումնարանի։

Մօտ քսան տարի նա եղել է Թիֆլիսի քաղաքալին Խորհրդարանի իրաւասու՝ մասնակցելով քաղաքի բոլոր Փինանսական խնդիրներում և, վերջապէս, հիւանդութեան պատճառով հրաժարուել է պաշտօնից։

Նա եղել է Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան վարչութեան անդրանիկ նախագահը։

Կից այս բոլոր պաշտօններին և իւր խմբագրական ծանր աշխատութիւններին, Արգար Յովհաննիսեանը ունեցել է և ուրիշ ոչ պակաս օգտաւէտ պարապմունքներ։ Ութսունական թուականների վերջերին նա գերմանացի Արտուր Լալստի աշխատակցութեամբ սկսում է գերմաններէն լեզուով Լալպղիգում հրատարակել լայտնի «Armenische Bibliotheca»-ը, որի նպատակն էր Գերմանիային ծանօթացնել Հայ վիպասանութեան և Հայքանասեղծութեան հետ։ Տասնումէկ հատորներ հրատարակելով, որոնց մէջ մտել են Պատկանեանի, Շաֆֆիի, Պուօշեանցի ընտակը երկերը, Արգար Յովհաննիսեանը մտադիր էր թարգմանել ու հրատարակել նոր հեղինակներից ևս, բայց նիւթականի պակասութիւնը խափանեց նրա մտադրութիւնը։ Այնուհետև նա երբեմն պարագում էր թարգմանութեամբ Հայերէնից ֆրանսերէն և առանձին գրքուկով հրատարակել է Շաֆֆիի «Խասովր» և «Բիբլի-Նարարանին»։

Զը նալելով ալդքան պաշտօններին և ալդքան աշխատութեան, Արգար Յովհաննիսեանը հիւրասիրում էր և աջակցում Կովկաս եկող յալտնի և ըռպացի ճանապարհորդներին և գիտնականներին։ Անգլիացի Կօների և Դիլլօն, ֆրանսիացի Ջանտը, գերմանացի Ռորբախ ու Ֆինկ գիտնականները, Թիֆլիսից հեռացել են քաղցր տպաւորութեան տակ, շնորհիւ Արգար Յովհաննիսեանի։ Եւ բոլորը իրանց գրուածների մէջ վկայում են հայ գործչի և րոպական կրթութիւնը, զարգացումը, լեզուագիտութիւնը, սրամտութիւնը և հիւրընկալութիւնը։ Իւր անձնաւորութեամբ նա անդիտակցաբար նպաստել է հայ անուանը և վարկին օտարների աչքում։ Իսկ այս մի ալնպիսի ծառայութիւն է, որին շատ քչերն են ընդունակ։

Վերջերս Արգար Յովհաննիսեանը հրատարակում էր Ֆինկի գերմաններէն «Հանդէս հայագիտութեան» անունով պարբերական հանդէսը։ Նա պատրաստում էր հայկական տռածների ֆրանսերէն թարգմանութիւնը բացատրութիւններով, բայց վաղահաս մահը չը թողեց նրան՝ այդ գործը լրացնելու։

Նա իսկապէս ժամանակակից լուսաւորուած յարդ էր և բազմակողմանի զարգացած։ Երևակալեցէք ձեզ, որ ժամանակակից ընական գիտութիւններին ծանօթ, կենսախինդ, աշխարհային կեանքի բոլոր հաճուքները վայելելու միջոց ունեցող յարդը գիտէր աղօթել ինչպէս մի նահապետական քրիստոնեալ։ Նա հաւատ ունէր։ Եւ այս հաւատնէր, որ նրան պահպանում էր չափազանցութիւններից և ոլժ էր տալիս նրան դժբաղտութիւնների ժամանակ շընկճուելու։ 1889 թուականին էր, եթէ չենք մոռացել, երբ նա երկու օրուալ ընթացքում կորցրեց իւր երեք արու զաւակներից երկուսին—Լևոնիկին և Գրիգորիկին։ Նրա բոլոր բարեկամներն ու ծանօթ-լուսաւորութիւններն ու ծանօթ-

ները հիանում էին տեսնելով, թէ զգալուն հայրը, որ պաշտում էր իւր զաւակներին, որպիսի հերոսութեամբ է կրում իւր անասելի վիշտը: Դժբաղդութեան ամենասոսկալի վայրկեաններին անգամ նա չէր կսրցնում իւր հաստատակամութիւնը և խելքի արթնութիւնը: Իբրև քաղաքակիրթ մարդ՝ իւր վշտով ուրիշներին չը ձանձրացնելու համար նա միշտ ժպտում էր, իւր ցաւերն ու հոգսերը թագցնելով սրտի խորքում:

Աբգար Յովհաննիսեանը իբրև էսթէթիկ և գեղարուեստասէր, հարկաւ, չէր կարող հեռու մնալ եւ հայ թատրոնից: Նա սիրում էր հայ թատրոնը, բայց սիրում էր այն չափով, որչափ այդ թատրոնը կարողանում էր գեղարուեստի հետ հաշտ ապրել: Հայ թատրոնի ամենափայլուն ժամանակամիջոցին, այն է եօթանասնական թուականների վերջերին և ութսունականների սկզբին Աբգար Յովհաննիսեանը իշխ. Բէհրուդեանի և իշխ. Ամատունու հետ ամենաեռանդուն մասնակցութիւնունէր թատրոնական գործերում: Պետրոս Աղամեանը մասամբ նրան էր պարտական իւր մտաւոր զարգացումը: Անուանի գերասանը Աբգարի խորհրդով և աջակցութեամբ սկսեց ուսումնասիրել ևրոպական կլասիկ գրուածները, որոնց թւում եւ Շէքսպիրի երկերը: Թիֆլիս գալիս Աղամեանը գաղափար անգամ չունէր Շէքսպիրի մասին: Պատմում են, որ նա առաջին անգամ կարգալով Համլետը, չի ըմբռնում նրա իմաստը և հերոսին անուանում է ապուշ, այդ այն հերոսին, որի վրայ ապագալում այնպէս սիրահարուեց փայլուն գերասանը: Նոյնպիսի բարերար ազդեցութիւն ունեցել է Աբգար Յովհաննիսեանը Ադամեանի ժամանակակից եւ միւս բեմական աշխատաւորների վրայ Պակաս չի օգնել նա եւ հայ թարգմանական ուեպերատուարին: Նա ունի Ֆրանսերէնից թարգմանած մի շարք պիէսներ, որոնցից մի քանիսն ալժմ էլ ներկայացւում են: Բացի

քարոլականից, Արգար Յովհաննիսսանը նիւթապէս էլ աջակցել է բեմին, շատ անգամ ունեսոր դերասաններին օգնելով փողով։

Իւր բազմակողմանի ձիրքերի շնորհով էր, որ Արգար Յովհաննիսսանը բացի հայերից վայելում էր Եւ օտարազգիների յարգանքը։ Գերմանական կրթութեան շնորհիւ, նա գերմանացի էր գերմանացու հետ, ֆրանսիական բնաւորութեան շնորհով նա ֆրանսիացի էր ֆրանսիացու հետ և իւրաքանչիւրը նրան վերաբերում էր ինչպէս իւր հայրենակցին։ Մրանսերէն և գերմաններէն լեզուներին նա տիրում էր կատարելապէս։ Ռուսերէն խօսում ու գրում էր ինչպէս բուն ռուս։ Նա գիտէր Եւ իտալերէն, որ սովորեց մի երկու շաբաթուալ ընթացքում, երբ հաչակաւոր իտալական ողբերգակ Ռօսախն Թիֆիսումն էր։ Կարճ միջոցում Ռօսսին ալնպէս սիրեց Արգարին, որ ալնուհետեւ նրան անուանում էր բարեկամ։ Արգար Յովհաննիսսանը վերջին ժամանակները ուսանում էր անգլիերէն և արդէն բաւական սովորել էր գրել ու կարդալու համար։

Տեղական լեզուներից գիտէր վրացերէն և նրա որախօսութիւնները յաճախ կրկնում էին վրաց շրջաններում։

Իւր այս յատկութիւնների շնորհով էր, որ Արգար Յովհաննիսսանը բոլոր փառայեղ բազմամարդ և արիստոկրատ հանդէսներում միաձայն ընտրում էր կառավարիչ։ Ալդ պաշտօնը նրան վաղուց էր ձանձրացրել և շատ հանդէսներից հրաժարում էր որպէս զի ստիպուած չը լինի այս կատարելու։

Երջանկալիշատակ Աղէքսանդր Երրորդ Կայսրը Թիֆլիս ժամանելիս Արգար Յովհաննիսսանը քաղաքի երեք ընտրեալներից մէկն էր Նորին Մեծութեանը քաղաքի կողմից արժանավայել ընդունելութիւն ցոլց տալու համար։

Վերջին չորս-հինգ տարիները նա, անողոք հիւանդութեան պատճառով, բոլորովին հեռացել էր հասարակական գործերից և վարում էր միայն Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան կառավարչի պաշտօնը, Արդէն նա մեռած էր և ինքն էլ զգում էր իւր ստալուտ մահը: Ալ ևս չքացել էր նրա վարպետուն դէմքից մշտական ուրախ ժպիտը, Մաշուել էր, ընկճուել, դէմքը կրում էր հողի գոլու, շրջում էր ինչպէս ուրուական, իւր բարեկամների ցաւակցութիւնը զարթեցնելով:

Նրան չօգնեց ոչ մի բժշկութիւն: Դնաց մի քանի տնկամ արտասահման, վերադարձաւ աւելի տկարացած: Նա կամեցաւ վերջին փորձն անել և նորից ողնորուեց արտասահման: Բայց կէս ճանապարհին մահը բռնեց նրան Սև ծովի ափին, Բաթում քաղաքում:

Առաջ ենք բերում նրա կեանքի վերջին ըոպէների նկարագրութիւնը, բժիշկ Լևոն Տիգրանեանի, որ ուղեկցում էր հանգուցեալին արտասահման: Ահա բըժշկի անպաճոյն, բայց սրտաշարժ խօսքերը.

Ապրիլի 14-ին, առաւտեան գնացքով ուղևորւեցինք Թիֆլիսից դէպի Բաթում: Այդ ճանապարհորդութիւնը համեմատաբար յաջող անցաւ: Հետեւեալ առաւտաւ մենք երկուսով կառքով զրօսնում էինք ծովափին և մեծ մասամբ կառքով կանգնած էինք մնում այս ու այն տեղ: Ես աշխատում էի երկար չը խօսել նրա հետ, որովհետև նա այնքան թոյլ էր, որ խօսելը նրան դժւարութիւն էր պատճառում: Գտնւելով Բաթումի գեղեցիկ բնութեան մէջ և նայելով անսահման ու խաղաղ ծովի հորիզոնին, Արգարն ասեց, որքա՞ն ազատ եմ շնչում՝ այստեղ, այս գեղեցիկ եղանակին, ի հարկէ, որ այստեղ ես կարող եմ կազդուրել: Երբ կանգնած էին գիմնազիոնի առջև, որ ծովի ափին է, աշակերտները խմբովին երգում էին: Արգարն ասեց, ոինչպէս գեղեցիկ են երգում: Սևնք սպասեցինք մինչև երգի վերջացնելը: Այդ վերջին երաժշտութիւնն էր, որ նա լսում էր: Նա սիրում էր երաժշտութիւնը:

Ժամի երկուսին մենք վերադարձանք հիւանոց: Նա-

յոգնած դէմք ունէր, որ սովորական էր նրա համար, սակայն ըստ մեր հին սովորութեան, մի քանի զւարճախօսութիւններ անելուց յետոյ, ևս առաջարկեցի նրան, կառքում երկար նստելուց յետոյ, պարկել և հանդստանալ: Նա լսեց ինձ: Ժամի երեքին Արգարի ամուսինը և ես խորհուրդ տվինք նրան շիջնել ճաշարան, այլ նրա համար ճաշն ուղարկել վերև: Տիկնոջ հետ ես իջայ ճաշարան: Ժամի 3½-ին մենք արդէն կրկին նրա մօտ էինք: Նա հանգիստ պառկած էր: Մօտենալով նրան և տեսնելով որ նրա դէմքը բաւականին զուարժ էր, շոյելով նրան՝ հարցըի կատակի ձեռվ ու Թիֆլիսի բարբառով «Արգար ջան, քէփումդ վունցիս: Նա բոնելով ձեռքս, սրտանց սեղմելով ու ժպտալով պատասխանեց: «ոչինչ, լաւ եմ: «Ուրեմն», ասացի, «գնամ իմ սենեակը, հանգստանամ՝ 10 ըոպէ եւ կրկին զամ:—«Չէ, մի գնա, ահա պառկիր հենց այստեղ, այս մահճակալի վրայ» ուր նստած էր տիկնը: Նս պառկեցի, բայց չը քնեցի, միայն թեթև մոռացութեան մէջ էի: Զանցը մօտ կէս ժամ, յանկարծ լսեցի նրա մահճակալից վայր ընկնելու մի սաստիկ ձայն: Նոյն ըոպէին թուայ տեղիցս: Արգարը վայր էր ընկել յատակի վրայ: Նրա աշքերը կիսափակ և անկեանք էին, ամբողջ երեսը և մանաւանդ շուրթերը կապտած, դողում էին, չնչառութիւնը համարեա վերջացած էր, թևերը և բոռնցքները կծկւած, ցնցմանց մէջ էին, զարկերակը չէր խփում, սիրտը չէր բաղխում: Նա իմ հարցերին և ճին ոչ մի, ոչ մի պատասխան չը տուեց և երեսի կապտութիւնը վայրիկնապէս սաստկացաւ: Նրա լայնացած սիրտը պայթել էր և այդ էր պատճառը, որ ցնցուելով վայր էր ընկել մահճակալից: Դուրս վաղեցի սենեակից, աղաղակով օգնութեան կանչեցի նրա ամուսինը, որ ընդհանուր հիւրասենեակում նամակ էր գրում իր որդուն: Լսելով ձայնս, ներս եկաւ ու տեսնելով իր Արգարին յատակի վրայ, ապշած հարցնում էր, թէ ինչ պատահեց: Մառաների օգնութեամբ բարձրացրինք մահճակալի վրայ: Նա արդէն վախճանուած էր: Նա այլ ևս չը կար այս աշխարհի համար, Այդ բոլորը կարող էր տևած լինել ոչ աւելի քան մի ըոպէ: Մի տեղական բժիշկ, որ երեկի հիւրանոցումն էր, հինգ ըոպէից յետոյ եկաւ ու նոյնպէս հաստատեց նրա մահը: Երեկոյեան պահին Թիֆլիսից եկաւ Արգարի քոյրը, տիկին Աֆթանդիեանը, որ մտադիր էր մի քանի օր անցնել մեզ հետ:

Մի երկու ժամից յետոյ Բաթումի հայ հասարակութիւնը

մեղ մօտ էր, յայտնում էր իր ցաւակցութիւնը Աբգար Յովհաննիսիսեանի յանկարծակի և անսպասելի մահուան առթիւժնոյն օրը, այն է ապրիլի 15 ի կէս գիշերին, աջակցութեամբ Բաթումի երիտասարդութեան և հասարակութեան, նրա դիակի հետ ուղևորուեցինք դէպի Թիֆլիս։ Պահելով Աբգարի դիակը Թիֆլիսում, նրա բնակարանում, ինչպէս յայտնի է լրագիրներից, ապրիլի 20 ին նրա մարմինը յանձնուեց հողին, Վանքի բակում. անձրեզ տեղում էր, կասես, մեղ հետ երկինքն էր լավիս էր։»

Աբգար Յովհաննիսիսեանի անուանն էլ կը մնալ անջնջելի ազգի մտաւոր կեանքի ապագալ պատմութեան մէջ։
